

3662

Συγχρηματικό.

1314

891-71
h-85

P - 1908

891.71

h-85

ԹԱՐԱՊՈՒԹԻՒՄ

ՀԱՆԴԻՊՈՒԹԻՒՄ

ԹԱՐԱՊՈՒԹԻՒՄ

391.71

հ-85

այս.

Խօսիք Եվանօվ

ՅԱՆԴԻՊՈՒՄՆ

(1408
35269)

Թարգմ. Ար. Գր.

2003

2011

289

Թ Ի Ֆ Լ Ի Զ
Էլեք. Տպար. «Գուտտենբերգ» Սլէպովսկայա, 1.
1908

Վաղարշառամ ընկեր

31599-Ա.2

Սիրելի Յովսէփ

Ինձ համար միշտ քաղցր և անմոռանալի են քո մտերմութիւնն ու անկեղծութիւնը:

Թէ որքան փայփայանքով ու գուրզուրանքով էիր վերաբերում դէպի քո գուրզնաքեայ երկերը, դրան ապացոյց կարող է լինել զբական այս երկիդ քո իսկ ձեռներէցութիւնով կատարուած սոյն փոխազրութիւնը:

Մինչ՝ միասին հրճում էինք մայրենի լեզուի վերածւած զործիդ առաջին երեսների շարուածքով—դիմեցիր այն շարաննաը միշոցին, որն արդէն այսօր մեզ բաժանում է իրարից:

«Հանդիպում»-իդ սոյն փոխազրութիւնը ակնածանքով ու յարգանքով թարմ յիշատակիդ:

Նուիրում է

Ա.ր. Գ.ր.

Զ յուլիս, 1908 թ.

Թիֆլիս

I

Երբ երեք զինւորի պահակը և պարթև քաղաքապահը սստիկանական բաժանմունքը բերին քաղաքական յանցաւորին, դռան մօտ խմբւած խառնիճաղանձ ամբոխը տեղի տւեց, որպէս զի կալանաւորն անցնի: Ամբոխի միջից լսւեցին անկապ ձայներ:

—Բերում են երկրորդին...

—Երեխ էլի գրպանահատ է...

—Հազնւած է ինտելիգենտի պէս...

—Ինչ բարի դէմք ունի...

—Այդպիսիներին ջոկել չի լինում կարդին մարդկանցից:

Մուտքով անցնելով, նրանք դիմեցին դէպի մութ միջանցքը, որը լցւած էր խոնաւութեան ծանր հոսով: Պրիստաւը բացակայ էր, և յանցաւորը յանձնեց թաղային հերթապահ վերակացուին:

—Հը՞ կրկին միտինգից—հարցրեց նա քաղաքապահին, որը չէր կարողացել զեկուցանել նորին մհծապատութեանը, թէ ով է յանցաւորը և որտեղից է բերում նրան:

14505-589

— Այն, ձերդ մեծապատութիւն... պատասխանեց նա, կախ զցելով ձեռները, ուզղւելով և մի կարգի դնելով հրացանն և ճարպոտ ահագին կօշիկներով ծանրաբեռնւած ուսները:

— Գրպանահամատ է:

— Ո՞չ, ձերդ մեծապատութիւն, սա ինքը միտինգի նախագահն է...

— Ըստ՝ երկարացրեց ուրախանալով թաղային վերակացուն... ինքը... միտինգի... նախագահը... Պատիւ ունիմ, պարոն նախագահ, բարեհաձեցէք, ասել ձեր անունն ու ազգանունը:

— Ես հրաժարւում եմ ձեզ որևէ բացատրութիւն տալուց. — պատասխանեց յանցաւորը. — այդու թէ հերթապահ թաղային վերակացուի, այլ հետախոյզ իշխանութեան գործն է, որին և ես հարկաւոր բոլոր տեղեկութիւնները կը տամ:

— Մի սրան տեսէք, — բացականչեց չարացած թաղային վերակացուն: — Ինչ կոպիտն է, և ինչպիսի տոնով է պատասխանում: Իվան, արգելարանը դիր այդ զղւելուն: Պրիստաւը կը գայ և դրան ցոյց կը տայ, թէ ինչ է նշանակում կոպիտ մինել: Հը՛, շնուռ, ինչ ես աչքերդ չուել:

Իվանն արթնանալով արագութեամբ բռնեց յանցաւորին, դուրս բերեց սենեակից և յետեկից քաշ տւեց դէպի արգելարանը, կոպտաբար թափահարելով նրա ձեռքը և մրթմրթալով:

— Ինչ կոպիտն է, ինչ անպիտանն է, ինչ զղւելին է:

II

Երբ նրա յետեկից չրիկացնելով յետ դրինաւ և ցուրտ արգելարանի ծանր դուռը, և դրսից շրխկաց փակւող կողպէքը, յանցաւորը չը համարձակւեցաւ մի քայլ անգամ առաջ գնալ, վախենալով, թէ, մի գուցէ, ընկնի անյատակ անդունուը: Նա յետ դարձաւ դէպի պատը, մէջքով յենւեց պատին, աչքերը լայն բաց արաւ, աշխատելով մի բան որոշել այդ սարսափելի շինութեան մէջ, որը նրա վրայ նայում էր թանձր և անթափանցելի աղջամղջի կլանող աչքերով:

— Ո՞վ էք, — նչեց մթութեան խորքում անտեսանելի մարդու դէպ նա ուղղած ձայնը:

— Այստեղ ուրիշն էլ կայ, — հարցրեց յանցաւորը դառնալով դէպի այն կողմը, որտեղից ձայնը լսեց, ամեն կերպ աշխատելով՝ նկատել այնտեղի մարդուն:

— Կայ, — նորից լւաց ձայն:

— Զեղ բոլորովին չեմ տեսնում:

— Միթէ... իսկ ինձ թւում է, որ մինչև անգամ ճանաչում եմ քեզ:

— Պայծառ արեգակի ճառագայթներից յետոյ իմ աչքերը դրակամնապէս կուրացել են այս գեղ բեզմանային խաւարում: Ես միայն տեսնում եմ մի անսահման սե տարածութիւն:

— Ոչինչ, աչքերդ շուառով կընտելանան այս

մթութեանը, և հեշտութեամբ կը նշմարես ամեն
չնչին իր:

—Լսէք. եթէ դուք ինձ հետ եղակի էք խօ-
սում, նշանակում է, որ ճանաչում էք ինձ: եթէ
այդպէս է, ուրեմն մօտեցիր ինձ, տուր ձեռքդ,
բարկիր, ու ինձ ասա, ով ես դու:

Մթութեան խորքից դուրս եկաւնա ու բըռ-
նեց նրա ձեռքը, բարկնեց ու ասաց.

—Դու՛ Միտիա, պէտք է որ բռնւած լինես
այն միտինգում, ուր այսօր նախազահ էիր:

Յանցաւորը նրա ձեռքը ամուր սեղմեց:

—Այն, ես վախենում եմ քեզանից.—ասաց
նա.—դու չար ոգի չես: Որտեղից գիտես դու
այդ:

—Շատ պարզ: Ես ինքս էլ հէնց այնտեղ
բռնւեցի:

—Ասա, ով ես գու:

—Ես՝ գիմնազիայի նախկին ընկերդ՝ Վանիա
Պանովն եմ:

—Վանիա Պանով, —բացականչեց զարմանա-
լով յանցաւորը: —Բարեւ սիրելիս, բարեւ. այ քեզ
զարմանալի հանդիպումն. դէհ, պատմիր ինձ,
ինչպէս, ինչ բախտի բերմամբ ընկար այստեղ: Այս քեզ բան: Մտքովս չը անցնում, թէ կարող էի
քեզ հանդիպել, և հանդիպել այսպիսի մի տեղ՝
ոստիկանական բաժանմունքի արգելարանում: Ան-
կեղծ, շատ զարմանալի է, շատ զարմանալի:

Պանովն ազատեց ձեռքը, կանգնեց նրա մօտ,

մէջքը դէմ տւաւ արգելարանի բորբոսնած պատին,
ունենք պինդ սեղմեց հովէ յատակին և, թախ-
ծոտ, ծանր մտածմունքով ու հառաչելով, արտա-
սանեց:

—Այս հանդիպումը խիստ տարօրինակ է:

Ի հարկէ՝ քեզ ևս ձերբակալեցին քաղաքա-
կան գործերի համար: —հարցրեց նրան ուրախ
Մամզինը:

—Ինչո՞ւ ի հարկէ: Ինչո՞ւ է քեզ այդպէս
թւում:

—Ես այդպէս եմ մտածում:

—Մխալում ես, սիրելիս: Ես ձերբակալւած
եմ ոչ այդ բանի համար:

—Հապա ինչո՞ւ համար:

—Ես... գրպանահատ եմ...

Մամզինը ծիծաղեց. նրան թւում էր, թէ
Պանովը կատակ է անում իր հետ, նա կարող էր
մտածել, որ Պանովը, գիմնազիական կեանքի իր
ամենալաւ ընկերը, այնքան սիրելին, զգայուն ըն-
կերը, որը գովարանում էր ընկերների շրջա-
նում՝ իր մաքուր և իգէալական տենչանքներով,
կարող էր ստորանալ մինչ այդ աստիճան:

—Միծաղում ես ինձ վրա, Վանիա, —հարցրեց
նրան Մամզինը:

—Երբէք:

—Եւ այդպէս: Ես հաւատամ, որ քեզ նըս-
տեցրել են այստեղ կողպատման համար:

—Իսկ դու չես ուզում հաւատալ դրան:

—Ինչ յիմարութիւն. ի հարկէ, ես երբէք
չեմ հաւատալ քեզ:

—Ինչպէս ուզում ես, մ՛րայն իմացիր, որ ես
ասում եմ ճշմարտութիւնը:

III

—Եւ հաւանական է, որ նա այս դէպօւմ
ասում է ճշմարտութիւնը, —մտածում էր Մի-
տիան. —Միթէ այստեղ որև է անհաւանական
բան կայ, Զէ որ ժամանակակից հասարակական
կարգերի անտանելի պայմանները ամեն մի ող-
ջախոհ մարդու կարող են մղել դէպի այդ օրի-
նակ մի քայլ: Հոգալից կեանքը, օր աւուր աճող
կարիքը, կենսական ամենաանհրաժեշտ պահանջ-
ներին բաւականութիւն տալու դժւարութիւնը,
ապրելու ցանկութիւնն ու անողոք քաղցի դաժան
ճիրաններին զերի չը լինելու հոգսը —այս ամենը
միթէ չեն կարող ստիպել մարդուն՝ զբաղւե-
լու այն տեսակ ցած գործերով՝ ինչպէս են՝ կողո-
պուան ու յափշտակութիւնը: Եւ ինչժաւ Վանիայի
խելքին փշեց կատակ անել նրա հետ յատկապէս
քաղաքամասի արգելարանում և այն էլ այժմ, երբ
նա երկարամեայ անջատումից յետոյ առաջին
անգամն էր հանդիպում նրան: Նրա խօսւածքի
լուրջ տոնը, նրա տխուր տրամադրութիւնը մի-
թէ ապացոյց չթն, որ նա կատակ է անում և
սուս է ասում:

—Դէ լաւ, —դարձաւ նրան զարմացած Մի-
տիան. —պատմիր ինձ, թէ զու ինչպէս դարձար
գրպանահատ:

Պանովը նրան ոչինչ չը պատասխանեց:

—Գուցէ ծմնր է քեզ համար՝ պատմել այդ
մասին, —հարցրեց նրան Մամզինը փոքր ինչ
լուրթիւնից յետոր:

—Դու հարցնում ես՝ ծմնր է... երբէք... ես
ուրախութեամբ կը պատմեմ այդ բոլորի մասին,
թէն առանձնապէս հարկ չը կար պատմելու որ
և է բանի մասին:

Խիստ դժնդակ կարիքի մէջ էի, ուրիշ ելք
չը կար, և ահա ես յանդկնեցի այդ գործին դի-
մելու: Եթէ քեզ հետաքրքրում են մանրամասնու-
թիւնները, լսիր, և ես կը պատմեմ:

IV

Մեր խեղա ընտանիքը այն ժամանակ կրում
էր անտանելի —ծանր օրեր: Մեր հայրը՝ մեր
միակ ապաւէնը իր ամբողջ ոյժը գոյութեան կուի
մէջ սպառելով՝ պառկած էր անկողնում հիւանդ
ու խորտակւած: Տանը մի կառը հաց չէր գտնը-
ւում: Սարսափն ու յուսահատութիւնը բոլորիս
կաշկանդել էր: Խեղա հայրս լաց էր լինում ան-
կողնի մէջ, մայրս ու քոյրս սենեակը լցրել էին
հառաջանքներով և հիստերիկական աղաղակներով.
իսկ ես ձեռներս կրծքիս խաչելով՝ անօդնական

անց ու դարձ էի անում սհնեակի մէջ մի պատից
գէպի միւսը: Խղճմտանքն ու կարեկցութիւնը
ճնշում էին հիւանդուս սիրտս: Մեզ վրայ ծանրա-
ցած կարիքն ինձ համբերութիւնից հանեց. պէտք
էր դրանից գուլս գալու մի հնար գտնել՝ ինչ էլ
որ լինէր:

Ես փորձեցի մէկ առ մէկ բոլոր միջոցները:
Հարուսա մարդիկ, խմբագրատներն ու ձեռնհաս
ազգականները—բոլորը սառն ու անտարբեր էին:
Բոլոր ջանքերս իգուր ու անյոյս էին:

Մի անգամ երեկոյեան քոյրս հագնւեց ու
պատրաստւեց հեռանալ տանից:

—Ո՞ւր,—հարցը նրան:

—Ո՞ւր,—պատասխանեց նա վրդովւած,—
քո գործը չէ: Իմացիր, Վանիա, որ դու ես ծը-
նողներիդ մեծ զաւակը, արդէն տղամարդ ես,
միմիայն քեզ վրայ է ընկած ընտանիքը կորու-
տից փրկելու պարտականութիւնը: Այժմ հարց
տալն աւելորդ է...

Նա գուրս եկաւ պրոսպեկտի կենտրոնը, որը
գիշերային կեղտու ու ցոփ կեանքի մէջ էր սուզւել,
և սկսեց ջղայնօրէն մաս գալ մայթի վրայով:

Քոյրս որոշել էր իր պատիւը զոհաբերելով՝
ազատել ընտանիքը:

Ի՞նչ անէի: Կարսղ էի հանգիստ կերպով
դիտել, թէ ինչպէս քոյրս իր պատիւը տալիս է
մի անբարոյական ստոր մարդու մի ինչ որ զըզ-
աելի բուբլու համար:

Ես նրան յետ կանգնեցրի այդ քայլից: Իմ
անհատական պատւիս կորուստով ես փրկեցի ըն-
տանիքը բարոյական անկումից: Միւնոյն է. եթէ
ընկնէր քրոջս պատիւը, մեր ընտանիքին այդպի-
սով հասած կը լինէր ամենածանր հարւածը. Թող-
ընկնէր իմ պատիւը, թող անխուսափելի հարւածը
ես ընդունէի—ինձ համար այդ այնքան ծանր-
էքը լինի, ինչպէս միւսների համար:

Այո, ես քրոջս տարայ տուն... բախտի բեր-
մամբ հնարաւորութիւն ունեցայ քրոջս փրկելու
սոսկալի անկումից... իսկնա ձգեց ինձ այս զըզ-
ւելի գործի մէջ, որ վաղ թէ ուշ պէտք է կորըս-
տեան մատնէր ինձ. ես այդ գիտէի:

V

Ուշ գիշերով ես թափառում էի քաղաքում: Զայրոյթից ինձ կորցրել էի, կատաղել էի յուսա-
հատութեան չափ ինձ տանջող նախազգացումից: Ելեկտրաքարշի կայարանի մօտ ես հանդիպեցի:
միայնակ կնոջ, որը վագօնի էր սպասում: Նրա-
կրծքից բրոշկայի ձեռով կախւած էր ոսկեայ ժա-
մացոյցը: Գլխումս առկայծեց մի յանցաւոր միտք:
Ես այն ժամանակ պարզ կերպով գիտակցում էի,
որ այդ ժամացոյցը ծառայում էր նրա համար
որպէս մի զարդ, մի աննշան իր. մինչդեռ այն-
իրը մեր խեղճ ընտանիքին փրկել կարող էր
դառն արցունքներից:

Այդ գիտակցութիւնը բաւական էր զայրոյթից կատաղած և ցաւակցութիւնից խանգարւած մարդու համար, որպէսզի նա յանդգնէր՝ անել մի քայլ, որ կարող էր չափազանց թանգ նստել նրա բարի անւան...

Այն, ես յարձակեցի նրա վրայ, խլեցի նրանից ժամացոյցը և սկսեցի փախչել Յետևիցս ընկնելու պատրաստութիւն տեսան, թէ ոչ—չեմ իմանում: Յիշում եմ միայն, որ ես ամբողջ թափով փախչում էի մութ և խուլ փողոցներով, առանց յետ նայելու:

Երբ մեր տան դրան հասայ և ներս ընկայ բակը, արագութեամբ փակելով դռնակը, իբրև մեռած՝ վայր զլորեցի գետին: Յոգնած, քրտինքի մէջ կորած, ես հազիւ էի շնչում, սիրտս թրթոռում էր ուժգին, իսկ կատարած գործիս համար սրտումս արթնացած խղճի խայթը միախառնուում էր բռնուած լինելու երկիւղի հետո Բայց և այս պէս հետքս չը գտան: Հանգստանալուց յետոյ ես տուն մտայ. միւս օրը ծախեցի յափշտակածս ժամացոյցը գարեջրատներից մէկում: Երբ փողերը տուն բերի, քոյրս ուրախութիւնից և հրճուանքից երկար ժամանակ լաց էր լինում:

Այն հարցին, թէ՝ մրտեղից ձեռք բերիր այդ փողերը, — ես պատասխանեցի. — մի հարուստ պարոն տուաւ:

Յետոյ փոքր առ փոքր թաղւում էի եռ այդ անարդ գործի կեղտոտութեան մէջ. այդ բանին, ի հարկէ, ամբողջովին նպաստում էին մեր խեղճ ընտանիքի անվերջանալի զրկանքները, որոնք հօրս մահից յետոյ անբաժան էին մեր ընտանիքից: Եւ ահա ես ամբողջ տարին դրանով եմ պարապում: Շատ անգամ եմ փորձել թողնել այդ արհեստը և զրաղւել ազնիւ աշխատանքով. իմ բոլոր ջանքերն ի դերև էին ենում:

Թեքուել էր ճանապարհս:

Եւ այսօր առաջին անգամն է, որ ես տուժում եմ արածներս...

Ո՞վ է մեղաւորն այդ բոլորի համար...

Միթէ արհեստիս իւրաքանչիւր հետևանք իմ արժանաւոր պատիմն է համարուելու...

Յիշում ես, սիրելիս, երբ մենք միասին գիմնազիայումն էինք... Զէ որ այն ժամանակ մենք ոչնչով չէինք տարբերում իւրարից: Մենք երկուս էլ օրինաւոր, խելօք, ընդունակ ու բարեհոգի էինք... Իսկ այժմ... Աւաղ, որքան հեռու ենք միմեանցից. մեր մէջ կայ մի անդունդ, որ լցւել չի կարող ոչ մի բանով և երբէք: Քեզ հովանաւորող կեանքի հոսանքը ձգեց ազնիւ շըրջանի մէջ, դուրս ձգեց քաղաքական կեանքի հովանաւորութիւնը:

բիզոնի վրայ, քեղնից պատրաստեց բարի և օգտակար բանւոր, իսկ ինձ... ինձ թնչը ստիպեց խաղալ բոլորից արհամարհւած հացկատակի այդ օրինակ ստոր գեր: Միթէ նոյն անդիմադրելի կեանքի հոսանքը չէր, այն հոսանքը, որ անհաւասար կերպով պարզեցում է մարդկանց տանջանք և բաղդաւորութիւն...

Եւ մի մտածիր, թէ մեղ թնչ է սպասում հեռու ապագայում...

Մեր գալիք օրերի ճանապարհներն իրար ինչքան խորթ են լինելու:

Ամբոխը, անմիտ և լաւն ու վատը իրարից շոկելու անընդունակ ամբոխը քեզ վարձատրում է փառարանութեամբ ու յարգանքով, իսկ ինձ իրեն յատուկ անմիտ արհամարհանքով, որը երբէք չի ջնջւիլ նրա չար յիշողութիւնից: Զէ որ այսօր վաղը կը հանեն իմ լուսանկարը և կուղարկեն բոլոր ոստիկանատները, զրելով նրա տակ խոշոր տառերով! «Գրպանահատ»:

Բայց մեղաւո՞ր եմ ես. մեղաւո՞ր եմ:

VII

Պանովը լրեց: Վհատութեամբ գլուխը կախ ձգելով և ձեռները կրծքին խաչելով, նա հեռացաւ անկիւնը և նստեց փայտի տախտի վրայ: Մամզինը կանգնեց միենոյն պատի մօտ, յենուելով նրան մէջքով: Նրա աչքերը, որոնք արդէն սովոր

էին մթութեան, այլ ևս չէին նայում գէպի անտեսանելի տարածութիւնը, այլ յառած էին Պանովի վրայ: Նա, որ ձերբակալման ժամանակ աշխոյժ էր և ուրախ, այժմ մոայլւած էր սարսափելի մտքերից, որ առաջին անգամ յարուցեց նրա մէջ Պանովը: Նրա անցեալի անգնահատելի ընկերն ու հիմա գրպանահատը: Դէպի Պանովը տածած կարեկցութիւնը տանջում էր նրան այն չափով, ինչ չափով որ իր մէջ մերկացած դատարկութիւնը, մինչև այժմ իրենից չը նկատւած ապօրինութիւնը, որի վրա հիմնւել էր նրա փքուն ժողովրդականութիւնը: Նա այժմ պարզ կերպով գիտակցում էր, որ արժանաւորութիւնը, նրա աշխատանքի արդիւնքը, բոլոր բաղդատորութիւնը տրւած է եղել նրան որպէս բաժին այն անիրաւ և անիփիդն ճակատագրից, որ անարդար կերպով վարձատրեց անմեղ Պանովին այնքան անտանելի տանջնակներով: Եւ հազարաւոր անմիթար խոհեր անցեալի հասարակութեան և գժնդակ կեանք քի անարդար պարզեների մասին ճախրում էին նրա մթազնած երեսակայութեան մէջ, զարնուելով կարեկից սրտի զգայուն լարերին:

Երկար նրանք պահպանել էին խորհրդաւոր լսութիւն, շարունակելով մնալ իրանց անշարժ գիրքում: Նրանք, երկուսն էլ մտածում էին մարդկային չար ճակատագրի մասին, որ զուրկ է կարեկցութիւնից, օտար է արդարութիւնից, որը անտեղեակ է սիրուց:

Եւ միայն բակում բացւող կողպէքի ձայնը
սթափեցրեց նրանց տևական քարացած դրու-
թիւնից: Դոները բացւեցին, և նեղ արգելարանը
արձագանդ տուաւ ներս մտնող ոստիկանի թառ
ձայնից:

—Ո՞վ է այստեղ միտինգի նախագահը...
Քնանք պրիստաւի մօտ,

Մամզինին դուրս բերին արգելարանից:



3662

Գիմել Տպ. ճշ.՝ Օրբելյանուկ
թ.՝ № 86. Արտազան Գրիգորյան
և Թիֆինի գրավածակընկերին:

6 դր.

2013

